

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ ՏՊԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԱՆՁԱՐԱՆ»

Արմեն Խաչատրյան
աստվածաբան-մատենագետ
Հայաստանի ազգային գրադարան

Հարգարժան հյուրեր, սիրելի՛ ներկաներ.

Ողջունում ենք Ձեր ներկայությունը Հայաստանի ազգային գրադարանի այս հյուրընկալ դահլիճում, ուր մեկտեղվել ենք՝ հավուր պատշաճի նշելու Աստվածաշնչի հայկական տպագրության 350-րդ հոբելենական տարին, որը նշանակալից է նաև գրադարանային միջավայրում:

Աստվածաշնչի առաջին տպագրությունը, որ տեղի ունեցավ 1452 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում, իրապես շրջադարձային իրադարձություն էր: Մինչ այդ Սուրբ Գիրքն ընթերցողին հասանելի էր միայն ձեռագիր ընդօրինակությունների շնորհիվ, որոնք էլ ձեռք էին բերվում մեծ դժվարությունների գնով: Աստվածաշնչի տպագրությունը, կարելի է ասել, հեղաշրջում առաջացրեց քրիստոնեական աշխարհում՝ Աստծու Խոսքը միանգամայն հասանելի դարձնելով մարդկությանը: Հայ ժողովրդի մի սովոր հաստվածը, սակայն, շարունակում էր անհաղորդ մնալ Աստվածաշնչի բովանդակությանը՝ սեփական լեզվով տպագիր Աստվածաշունչ չունենալու պատճառով: Եվ ահա 1666 թ. Նիդեռլանդների Ամստերդամ մայրաքաղաքում Ոսկան Երևանցին առաջին անգամ տպագրում է ոսկեղենիկ գրաբար հայերեն լեզվով թարգմանված Աստվածաշունչ մատյանը: Այսպիսով, հիմք դրվեց հայերեն լեզվով տպագիր Աստվածաշնչի հրատարակություններին, որոնք իրենց ուրույն տեղն զբաղեցրին համաշխարհային գրականության շարքերում:

Միայն ավելի քան մեկ դար անց՝ 1853 թ., ներկայիս Թուրքիայի Իզմիր կամ պատմական Զմյուռնիա քաղաքում առաջին անգամ տպագրվում է աշխարհաբար հայերենի փոխադրված Աստվածաշունչը: Սրանից մոտ 3 տասնամյակ առաջ՝ 1825 թ., Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Հովհաննես վրդ. Զոհրապյանի կողմից առաջին անգամ Փարիզում լույս ընծայվեց Նոր Կտակարանը՝ աշխարհաբար հայերենով և զուգադիր գրաբար թարգմանությամբ, իսկ 1828 թ.՝ միայն աշխարհաբար հայերենով: Արդեն 1842 թ. նույն Զմյուռնիա քաղաքում առաջին անգամ Հին Կտակարանի առանձին գրքեր տպագրվում են հայատառ թուրքերեն լեզվով՝

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արևմտահայաստանում շատ հայեր, հատկապես գավառաբնակները, մեծ մասամբ թրքախոս են և դժվարությամբ են հասկանում հայերեն տեքստերը, թեև կարողանում են կարդալ հայերեն տառերը: Հայատառ թուրքերենը նաև պաշտպանողական նշանակություն ուներ, քանի որ թուրքերի տեսադաշտից նրբորեն քողարկում էր գրքի բովանդակությունը: Ամբողջական Աստվածաշունչն առաջին անգամ հայատառ թուրքերենով է հրատարակվում 1859 թ.:

Գալով Հայաստանի ազգային գրադարանում պահվող հայերեն և հայատառ Աստվածաշունչ գրքերին՝ պետք է նշել, որ մայր գրադարանում առկա են ընդհանուր առմամբ 89 անուն հայերեն և հայատառ Աստվածաշունչ՝ որից 66 անուն Աստվածաշունչը՝ հայերեն, իսկ 23 անուն Աստվածաշունչը՝ հայատառ թուրքերեն՝ այդ թվում նաև բողոքական հրատարակություններ: Այստեղ զանց ենք առել Աստվածաշնչի առանձին գրքերի, Աստվածաշնչի պարականոն գրքերի, մանկական Աստվածաշնչի, աստվածաշնչական համառոտապատումների և դրանց վերաշարադրանքի հրատարակությունները...

Հայաստանի ազգային գրադարանից բացակայում են ընդհանուր առմամբ 27 անուն Աստվածաշունչ, որից 24 անուն Աստվածաշունչը՝ հայերեն, իսկ 3 անուն Աստվածաշունչը՝ հայատառ թուրքերեն: Աստվածաշնչի այս վերջին հրատարակություններից օրինակներ կան Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանի գրադարանում, Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանում, Էջմիածնի մատենադարանում, Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, Երևանի Խնկո Ապրի անվան մանկական ազգային գրադարանում, Հայաստանի ազգային գրապալատում և Արագածոտնի մարզային գրադարանում:

1908 և 1949 թթ. տպագրության 2 անուն հայերեն Աստվածաշունչ գրքերը ոչ միայն Հայաստանի որևէ գրադարանում տեղ չեն զբաղեցնում, այլև դրանք հիշատակված չեն անգամ մատենագիտական ցուցակներում, որոնք վաճառքի են դրված համացանցում: Հայաստանի գրադարաններին անձանոթ են ևս 5 անուն հայերեն և հայատառ Աստվածաշունչ գրքեր, որոնց մասին հիշատակություններ կան Կահիրեում գործող Պիմեն Չարդարյանի գրատան ընդարձակ գրացանկում, Հ. Արսեն Դազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» երկհատորյակում և Փարիզի հայկական Նուպարյան գրադարանի վարիչ Գարտաշյանի կազմած գրացուցակում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հայ գրքի մատենագիտական հատորյակներից դուրս են մնացել 1861, 1878 թթ. հայատառ թուրքերեն և 1870, 1908, 1909 թթ. հայերեն Աստվածաշունչ գրքերը:

Իմ կողմից պատրաստվել է հայերեն և հայատառ տպագիր Աստվածաշնչի մատենագիտական ամբողջական ցուցակը, որը կազմվել է իմ ձեռքի տակ եղած ըստ հետևյալ մատենագիտական աղբյուրների՝

ա. Նինել Ոսկանյանի, Օֆելյա Գյուլումյանի և այլոց կողմից համահեղինակությամբ կազմված «Հայ գրքի մատենագիտությունը 1512-1940 թթ.»,

բ. Հասմիկ Ստեփանյանի կազմած «Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը 1727-1968 թթ.»,

գ. Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ, որից առայժմ դուրս են մնացել Երևանի և Էջմիածնի մատենադարանները,

դ. Հայ գրքի էլեկտրոնային շտեմարան,

ե. Հայաստանի ազգային գրադարանի ծառայողական քարտարաններ:

Ավելացնեմ, որ Հայաստանի ազգային գրադարանը՝ որպես հայ գրքի բացառիկ շտեմարան, իր հոգևոր գանձարանից մի շարք գրքեր է թվայնացրել՝ այդ թվում և Աստվածաշունչ գրքերը, որոնք տեղադրված են գրադարանի կայքէջում (www.nla.am) և հասանելի են greenstone ծրագրի միջոցով: Արդեն իսկ ավարտված է հնատիպ շրջանի գրականության թվայնացումը, ինչը եզակի հնարավորություն է ընձեռում հայ ընթերցասեր հասարակությանը՝ տանը և ամենուր համակարգիչներում առցանց կարդալու հայ հոգևոր գրականության մի ստված հատվածը, ինչի համար, ինչպես նաև տարվող մյուս աշխատանքների համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի ազգային գրադարանի տնօրենությանը:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

մատենագիտական ցանկ

(Նվիրվում է հայերեն առաջին
Աստվածաշնչի տպագրության 350-ամյակին)¹

1666-1668

1. **Աստուածաշունչ**.- Ամստերդամ: Տպագր. Ոսկան Երևանցու, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1666-1668.- 8 չհ., 628 (ՈԻԸ), 834 (ՊԼԴ) երկայուն էջ, շարվ. 21X14,7 սմ:

1705-1707

2. **Աստուածաշունչ**.- Կ. Պոլիս: Տպ. Պետրոս Լատինացու, 1705-1707.- 511, 647 երկայուն էջ, շարվ. 16,8X11 սմ:

1733

3. **Աստուածաշունչ**: Հրատ. Մխիթար Սեբաստացու.- Վենետիկ: Տպ. Անտոնի Բորտոլիի, 1733.- 10 չհ., 1280 երկայուն էջ, շարվ. 24,2X14,2 սմ:

1805

4. **Աստուածաշունչ**: Մատեան Հին և Նոր կտակարանաց /Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի.- Վենետիկ: [Տպ.] Ս. Ղազար, 1805.- 12, 2, 836, 30 էջ, շարվ. 17,2X22,7 սմ:

1817

5. **Աստուածաշունչ**: Գիրք Հնոց և Նորոց կտակարանաց.- Կալկաթա: Տպագր. «Ի գիւղաքաղաքն Սիրամփուր», 1817.- 6 չհ., 5, 1307 էջ, շարվ. 17,3X22,5 սմ:
6. **Աստուածաշունչ**: Գիրք Հնոց և Նորոց կտակարանաց.- Ս. Պետերբուրգ: Տպ. Հովսեփ Հովհաննիսյանի, 1817.- 6 չհ., 1126 էջ, շարվ. 18,5X24 սմ:

1853

7. **Աստուածաշունչ**: Գիրք Հին և Նոր կտակարանաց.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆֆիթի, 1853.- 1176 էջ, շարվ. 24X15 սմ:

1857

¹ Հայաստանի ազգային գրադարանում առկա:

8. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հովհաննես Մյուհենտիսյանի, 1857.- 1406 էջ, շարվ. 16X9 սմ:

1859

9. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած: Նյու-Յորք: Տպ. Աստվածաշնչի ընկերության, 1859.- 4 չհ., 1010, 315 երկայուն էջ, շարվ. 14,5X9 սմ:

1860

10. **Գիրք աստուածաշունչը Հին եւ Նոր կտակարանաց:** Ըստ միաբան վաղեմի գրչագր. մերոց և յոյն բնագրաց: Հրատ. Ա. Բագրատունի.- Վենետիկ: Տպ. Ս. Ղազար, 1860 (ՌՅԹ).- 1224 էջ, 28 ն. թ. նկ., շարվ. 20X13 սմ:

1861

11. **Քիթապը Շէրիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]:** Թարգմանություն եբրայերեն և հունարեն բնագրերից հայերեն, ապա հայերենից հայատառ թուրքերեն /Թարգմ.՝ Վիլյամ Գուդելի.- Կ. Պոլիս: Տպ. Ամերիկյան Ս. Գրքի ընկերության, 1861.- 1041 երկայուն էջ:
Հայատառ թուրքերեն:

12. **Քիթապը Շէրիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]:** Ասըլ իպրանի վէ եունանիճէտէն աչըգ թիրքճէյէ թէրճիմէ օլունուպ.- Կ. Պոլիս (Ստամբուլտա): Ա. Պ. Չըրչըլըն պասմախանէսինտէ թապ օլունտու= (տպ. Ա. Պ. Չըրչիլի), 1861.- 1041 երկայուն էջ, շարվ.՝ 25X15 սմ:
Հայատառ թուրքերեն:

1863

13. **Քիթապը մուգատտէս Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]:** Թարգմանություն հունարենից երրորդ անգամ.- Կ. Պոլիս: Տպ. Հարություն Մինասյանի, 1863.- 1040 էջ, շարվ. 22X15 սմ:
Հայատառ թուրքերեն:

1867

14. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբր. եւ յուն. թարգմ.- Նյու-Յորք: Տպ. Աստվածաշնչի ընկերության, 1867.- 880, 274 գծափակ էջ, շարվ. 20X12 սմ:

1870

15. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նոր Եօրք: [Տպ.] Աստուածաշունչի ընկ., 1870.- 1153 էջ:

1873

16. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագր. թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1873.- 1169 էջ, շարվ. 25X18սմ:

1877

17. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1877.- 880 գծափակ էջ, շարվ. 19X9 սմ:

1878

18. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1878.- 898 էջ, շարվ. 24X17 սմ:

19. **Ահտ ըլ Աթիգ վէ Ահտ ըլ Ճէտիտ**=[Հին կտակարան և Նոր կտակարան].- İstanbul=[Ստամբուլ].- 852, 251 էջ:
Հայատառ թուրքերեն:

1880

20. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1880.- 880 էջ, շարվ. 19X13 սմ:

21. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վէ 'ահտը ճէտիտ**=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1880.- 936, 296 էջ, շարվ. 24X16,5 սմ:
Հայատառ թուրքերեն:

1883

22. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1883.- 1171 երկսյուն էջ, շարվ. 24X17սմ:

23. **Աստուածաշունչ:** Մատեան Հին և Նոր կտակարանաց: Թարգմ. Եբրայական և յունական բնագրից.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1883.- 1008 էջ, շարվ. 16X9 սմ:

24. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վէ 'ահտը ճէտիտ**=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1883.- 1114, 324 էջ:
Հայատառ թուրքերեն:

1884

25. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պայաճյանի, 1884.- 879, 1 չի. գծափակ էջ, շարվ. 19,5X13 սմ:

26. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պայաճյանի, 1884.- 1087 գծափակ, երկայուն էջ, շարվ. 12X8 սմ:

27. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ**=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1884.- 927, 292 էջ:
Հայատառ թուրքերեն:

1888

28. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ**=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1888.- 1385 էջ:
Հայատառ թուրքերեն:

1889

29. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1889.- 895 երկայուն էջ, շարվ. 24X17 սմ:

30. **Գիրք Հին և Նոր կտակարանաց:** Եբրայական և յունական բնագիրներէն թարգմ.: (Աշխարհաբար).- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1889.- 1170 էջ, շարվ. 24X17 սմ:

1890

31. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1890.- 879 էջ, շարվ. 20X13 սմ:

1892

32. **Աստուածաշունչ:** Մատեան Հին և Նոր կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց լոյս ընծայեալ համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց.- Կ. Պոլիս: Տպագր. Գարեգին Պաղտատլյանի, 1892.- Բ, 256՝ էջ, շարվ. 17X13 սմ:

33. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ**=[Աստվածաշունչ]: Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը 'իպրանի վէ քիլտանի վէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպուլտա=[Ստամբուլ]: Ա. Յ. Պոյաճեան Մաթպա'ասընտա թապ' օլունմըշ տըր, 1892.- 927, 292 երկայուն էջ:
Հայատառ թուրքերեն:

1895

34. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանաց: Համեմատութեամբ եբրայական և յունական բնագր.- Կ. Պոլիս: Տպ. Գարեգին Պաղտատյանի, 1895.- Ը, 1 չի., 986, 280, 4 չի. էջ, շարվ. 19X13 սմ:

1896

35. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական և յունական բնագրէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Պոյաճյանի, 1896.- 1424 էջ, շարվ. 20X12 սմ:

36. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].-** Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1896.- 1254 էջ: Հայատառ թուրքերեն:

1898

37. **Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած. Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյան, 1898.- 1169 էջ, շարվ. 23X17 սմ:

1899

38. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1899.- 880 էջ, շարվ. 19X12 սմ:

1900

39. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].-** Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1900.- 1396 էջ: Հայատառ թուրքերեն:

1902

40. **Աստվածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյան, 1902.- 1010 երկսույն էջ:

1903

41. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1903.- 1 չի., 1066 գծափակ, երկսույն էջ, շարվ. 13X8,5 սմ:

1905

42. **Աստուածաշունչ:** Հին եւ Նոր կտակարան: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1905.- 1169, 1 չի. երկսույն էջ, շարվ. 25X17 սմ:

43. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1905.- 1056, 308, 13 էջ: Հայատառ թուրքերեն:

1906

44. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1906.- 1 չհ., 1347 երկայուն էջ, շարվ. 16X11 սմ:

45. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ]: 'Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը 'իպրանի վե քիլտանի վե եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ=[Թարգմանություն հունարեն եւ եբրայերեն բնագրերից].- Իսթանպուլտա=[Կ. Պոլիս]: Ա. Յ. Պոյաճեան մաթապ'ասընտա թապ' օլունմըշ տըր, 1906.- 1025, 13 երկայուն էջ: Հայատառ թուրքերեն:

1906-1907

46. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1906.- 1150 երկայուն էջ, շարվ. 25X17 սմ:

1908

47. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1908.- 926, 292, 9 էջ: Հայատառ թուրքերեն:

1909

48. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կոստանդնուպոլիս: Տպ. Ա. Յ. Պոյաճեան, 1909.- 1046 էջ:

1910

49. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1910.- 1 չհ., 867, 1 չհ. երկայուն էջ, շարվ. 20X13,5 սմ:

50. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1910.- 1056, 13, 308 էջ: Հայատառ թուրքերեն:

1911

51. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1911.- 2 չհ., 1046 երկայուն էջ, շարվ. 13X8,5 սմ:

1913

52. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1913.- 2 չհ., 1046 երկայուն էջ, շարվ. 13X9 սմ:

53. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ]:** Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը իպրանի վէ քիլտանիվէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպօլտա=[Կ. Պոլիս]: Տպ. Պոյաճեան Մաթպասընտա թապ օլունմըշ տըր, 1913.- 927 էջ:
Հայատառ թուրքերեն:

1914

54. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Մաթետոյանի, 1914.- 1 չհ., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10,5 սմ:

1915

55. **Քիթապը մուգատտէս եանի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Գիրք Հին եւ Նոր կտակարանաց]:** Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը իպրանի վէ քիլտանի վէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպօլտա=[Կ. Պոլիս]: Յակոբ Մատթէոսեան Մաթպա Ասընտա թապ Օլունմըշ տըր, 1915.- 875, 273, 10 երկայուն էջ:
Հայատառ թուրքերեն:

56. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Գիրք Հին եւ Նոր կտակարանաց].-** Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1915.- 1056, 13, 306 էջ:
Հայատառ թուրքերեն:

1917

57. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նյու-Յորք: Տպ. Աստվածաշնչի ընկերության, 1917.- 879, 1 չհ. գծափակ, երկայուն էջ, շարվ. 23X16սմ:

1920

58. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Մաթետոյանի, 1920.- 1 չհ., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10 սմ:

1921

59. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հ. Մաթետոյանի, 1921.- 1 չհ., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10սմ:

60. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունակ. բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հ. Մաթևոսյանի, 1921.- 1046 երկայուն էջ, շարվ. 13,5X8,7 սմ:

1922

61. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Յունական բնագրէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Մատթեոսյանի, 1922.- 1046 երկայուն էջ, շարվ. 13X9 սմ:

Նկարագրված օրինակը տիտղթ. չունի: Նկարագրությունը կատարված է ձեռագիր գրվածից:

62. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Ա. Պոյաճյանի, 1922.- 1 չհ., 1347 երկայուն էջ, շարվ. 15,5X9 սմ:

1923

63. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հ. Մաթևոսյանի, 1923.- 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10 սմ:

1926

62. **Ահտ ըլ աթիգ վէ ահտ ըլ ճէտիտ**=[Հին կտակարան եւ Նոր կտակարան].- Բեյրութ: Տպ. Ամերիգան մաթպասսը, 1926.- 1056, 13, 308 էջ:
Հայատառ թուրքերեն:

63. **Քիթապը Մուգատտէս**=[Աստուածաշունչ].- Բեյրութ: Տպ. Աստվածաշնչի Ամերիկյան ընկերության, 1926.- 1056, 13, 308 էջ:
Հայատառ թուրքերեն:

1927

64. **Քիթապը Մուգատտէս**=[Աստուածաշունչ].- Բեյրութ: Տպ. Ամերիգան Քիթապը Մուգատես Շիրքեթի (Աստվածաշնչի Ամերիկյան ընկերություն), 1927.- 1056, 13, 308 էջ:
Հայատառ թուրքերեն:

1928

65. **Քիթապը Մուգատտէս**=[Աստուածաշունչ].- Վիեննա: Տպ. Աստվածաշնչի Ամերիկյան ընկերության, 1928.- 927, 295, 9 էջ:
Հայատառ թուրքերեն:

1929

66. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպ. Ամերիկյան Աստուածաշունչի ընկերության, 1929.- 1 չհ., 1046 երկայուն էջ, շարվ. 13,5X8 սմ:

67. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Համեմատութեամբ Եբրայական եւ յունական բնագրաց.- Վիեննա: Տպ. Ամերիկյան ընկերության Սուրբ գրոց, 1929.- Ը, 991, 1 չի. երկայուն էջ, շարվ. 20X13 սմ:

1930

68. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպ. Ամերիկյան Աստվածաշնչի ընկերության, 1930.- 1 չի., 867, 1 չի. երկայուն էջ, շարվ. 19,5X13,5 սմ:

69. **Քիթապը Մուգատտէս=[Աստուածաշունչ].-** Վիեննա: Տպ. Աստվածաշնչի Ամերիկյան ընկերության, 1930.- 1025, 298, 13 էջ:
Հայատառ թուրքերէն:

1932

70. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպ. Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն, 1932.- 1046 էջ, շարվ. 13,5X8,7:

1942

71. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն, 1942.- 1046, 302 էջ:

1947

72. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Միացեալ Աստուածաշունչի ընկերութիւն, 1947.- 1046, 302 էջ:

1953

73. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Միացեալ Սուրբ Գրքի ընկերութիւն, [1953].- 988, 279 էջ, 4 չի. ծալ. թ. գունավոր քարտեզներ:

1955

74. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Միացեալ Աստուածաշունչի ընկերութիւն, 1955.- 1046, 302 էջ, 4 չի. ծալ. թ. գունավոր քարտեզներ:

1957

75. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: [Տպ.] Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն, 1957.- 867, 276 էջ, 3 ներդիր գունավոր քարտեզներ:

1960

76. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Լոնտոն, 1960.- 1424 էջ:

1963

77. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած: Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններ.- Պէյրութ, 1963.- 988, 279 էջ:

1966

78. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած: Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններ.- Պէյրութ, 1966.- 850, 4 չհ., 257 էջ:

1970

79. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած: Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններ.- Պէյրութ, 1970.- 988, 279, 4 չհ. էջ:

1981

80. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Դալլաս: [Տպ.] Ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւն, 1981.- 279 էջ, 3 ներդ. թ. գունավոր քարտեզ:

1985

81. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններ, 1985.- 1570 էջ:

1994

82. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմանութիւն.- Ս. Էջմիածին: [Տպ.] Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1994.- 1346, 352 էջ:

1996

83. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէ թարգմանուած.- Paramus: [Տպ.] Armenian Missionary Association of America, 1996.- 1218, 346 երկայուն էջ, շարվ. 22,5X14,5 սմ:

1997

84. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց.- Էջմիածին: [Տպ.] Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997.- Ը, 1165, 1 չհ., 280 երկայուն էջ, շարվ. 20X13 սմ:

Գիրքը 1929 թվականի հրատարակության վերահրատարակությունն է: Առկա է նաև վերը նշված հրատարակության տիտղոսաթերթը:

1998

85. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- [Էջմիածին]: [Տպ.] Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1998.- 1424 էջ:

2010

86. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Երևան: [Տպ.] Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2010.- 1423 էջ:

87. **Աստուածաշունչ.**- Նյու-Յորք: [Տպ.] Նոր աշխարհ, 2010.- 2048 երկայուն էջ:

2012

88. **Աստուածաշունչ:** Հին և Նոր կտակարան.- London: [Տպ.] Trinitarian Bible Society, 2012.- 1315 էջ:

2014

89. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերեն նոր թարգմանութիւն.- Ս. Էջմիածին: [Տպ.] Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 2014.- 1346, 352 էջ:

1650²

1. ***Աստուածաշունչ:** (Անավարտ տպագրութեան).- Նոր Զուղա: Տպագր. Հովհաննես Զուղայեցու, տպ. Ամենափրկիչ վանքի, 1650 (°):
Այս անավարտ տպագրութեան մասին առաջին անգամ հիշատակել է Խաչատուր Նորջուղայեցին «Պատմութիւն պարսից» ուսումնասիրութեան մեջ (էջ 121) «Ուր և անդ բազում գրեանց՝ որք տպեցին, սկսան ընդ որոց և տպել զԱստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչև ցայսօր ի միջի մերում. Սա կարին լաւագոյն ունելով զթուղթն ու զգիրնքան զառաջին տպեալ գրեանսն» (տե՛ս նաև «Ազդարար», 1795, էջ 233):
Գրքի մասին հիշատակել են նաև Ա. Երիցյանը, Թեոդիկը, Գ. Գալեմքարյանը և ուրիշներ: Թեոդիկը գրքի անավարտ տպագրութեան թվականը համարում է 1650-ը:

1859

2. **Ահտը Աթիգ վէ Ահտը Ճէտիտ**=[Հին կտակարան եւ Նոր կտակարան]:
Հայատառ թուրքերեն:
Պ. 2.

1862

3. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նյու-Յորք: Տպ. Աստվածաշնչի ընկերութեան, 1862.- 679, 1 չի. գծափակ էջ, շարվ. 20X13 սմ:
ՄՄ

4. **Քիթապը Շերիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ**=[Աստուածաշունչ]:
Թարգմանությունը՝ եբրայերեն և հունարեն բնագրերից հայերեն, ապա հայերենից՝ հայատառ թուրքերեն /Թարգմ.-ը՝ Վիլյամ Գուդելի.- Կ. Պոլիս: Տպ. Ամերիկյան Ս. Գրքի ընկերութեան, 1862.- 1200 երկայուն էջ:
Հայատառ թուրքերեն:
ՄՄ: ԳԱԱ

1875

5. ***Աստուածաշունչ:** Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Պոյաճյանի, 1875.- 1010, 315 էջ:
Ղ հտ. 1, 217

1881

6. ***Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Պոյաճյանի, 1881.- 1010, 315 էջ:

² Հայաստանի ազգային գրադարանում բացակա:

Ղ հտ. 1, 217

1884

7. *Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Հակոբ Պոյաճյանի, 1884.- 1169 էջ:

Ղ հտ. 1, 217

1888

8. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագրէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1888.- 1010 էջ, շարվ. 15X10 սմ:

ԳԱԱ

1893

9. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կոստանդնուպոլիս: Տպ. Ա. Յակոբ Պոյաճեան, 1893.- 877, 880, 275 սյունակագիր էջ:

ԵՊՀ

1898

10. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1898.- 1169 էջ, շարվ. 23X17 սմ:

ԳԱԱ: ՄՄ

1902

11. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1902.- 1 չհ., 1010 երկսույն էջ, շարվ. 16X10 սմ:

ԳԱԹ: ԵՊՀ

1905

12. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1905.- 879, 5 չհ. գծափակ, երկսյուն էջ, շարվ. 18X12,5 սմ:

ՄՄ

1908

13. *Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Ա. Հակոբ Պոյաճյանի, 1908.- 988, 278 երկսյուն էջ, շարվ. 16,5X10,5 սմ:

Համացանց

1911

14. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1911.- 1107 երկայուն էջ, շարվ. 24X18 սմ:
ԵՊՀ

1912

15. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպ. Հակոբ Պոյաճյանի, 1912.- 1 չի., 864, 276 երկայուն էջ, շարվ. 20X13 սմ:
ԷՄ

16. **Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ**=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպ. Պոյաճեան, 1912.- 1056, 13, 308 էջ:
Հայատառ թուրքերեն:
ՓՆԳ

1949

17. ***Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Միացեալ Աստուածաշունչի ընկերութիւն, 1949, 1046, 302 երկայուն էջ, շարվ. 13,5X9 սմ:
Համացանց

1958

18. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ-Գահիրէ-Դամասկոս, 1958.- 1046, 302 էջ:
ԳԱԱ

1959

19. **Աստվածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Լոնտոն, 1959.- 1424 էջ:
ԳԱԱ

1981

20. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: [Տպ.] Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններ, 1981.- 1218 , 346, 6 չի. էջ, քարտեզներ:
ԽՄԳ

1989

21. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Stuttgart, 1989.- 1424 էջ:

ԵՊՀ: ԳԱԱ

22. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Թեհրան: [Տպ.] Iranian Bible Society, [1989].- 1424 էջ:

ԳԱԱ: ԱՄԳ

23. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Ա. տ.: [Տպ.] Հայ Ավետարանչական ընկերակցություն և Միջազգային Սուրբ Գրոց Միություն, 1989.- 1424 էջ:

ԻԿԳ

1994

24. **Աստուածաշունչ:** Գիրք Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Մոսկվա, [Տպ.] «Zeus» «Major» LTD, 1994.- 346 (°) էջ, 5 թերթ քարտեզ:

ԽՄԳ

2010

25. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագրերից թարգմանուած: «Բիբլիական միավորում».- Երևան: [Տպ.] «Դավիթ թագավոր», 2010.- 1426 էջ:

ԳՊ

2013

26. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերեն նոր թարգմ.: Վերահրատ.- Ս. Էջմիածին: [Տպ.] Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2013.- 1346, 352 երկյուն էջ:

ԳՊ

2015

27. **Աստուածաշունչ:** Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերեն նոր թարգմ.: Վերահրատ.- Ս. Էջմիածին: [Տպ.] Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2015.- 1697 էջ:

ԳՊ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՄԳ** – Արագածոտնի մարզային գրադարան
- ԳԱԱ** – ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարան
- ԳԱԹ** – Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարան
- ԳՊ** – Հայաստանի ազգային գրապալատ
- ԵՊՀ** – Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան
- ԷՄ** – Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան
- ԻԿԳ** – Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան
- ԽՄԳ** – Խնկո Ապրի անվան մանկական ազգային գրադարան
- Ղ** – Հ. Արսէն Ղազիկեան, «Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի», հտ. 1-2, Վենետիկ:
- ՄՄ** – Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան)
- Պ. Զ.** – Ընդարձակ գրացանկ Պիմէն Զարդարեան գրատան, Կահիրէ:
- ՓՆԳ.** – Փարիզի հայկական Նուպարեան գրադարանի վարիչ Գարտաշեանի կազմած գրացուցակ, Թարիզ, ա.թ.

Ծնթ. Վերոբերյալ ցանկում աստղանիշով (*) նշված են այն գրքերը, որոնք մատենագետը չի տեսել և գրքի նկարագրությունը վերցրել է մատենագիտական որևէ ցուցակից կամ այլ աղբյուրից: